

Աննախադեպ արտագաղթի ժողովրդագրական հետեւանքները*



1.

ԱՐՏԱԳԱՂԹԸ, ամենից առաջ, ազդում է բնակչության գենոֆոնդի վրա: Այդ ազդեցությունն արտահայտվում է ուղղակի եւ անուղղակի առումով: Ուղղակի, երբ արտագաղթի չափով պակասում է բնակչությունը: Օրինակ, 1991-2000թթ. լեգալ եւ անլեգալ բնույթ կրող արտագաղթի պատճառով ՀՀ բնակչությունը նվազեց մոտ մեկ միլիոն 270 հազար մարդով: Անուղղակի, երբ նվազում է բնակչության բնական աճը, քանի որ երեխաները ծնվում են այլ երկրներում: Բնակչության բնական աճի, մասնավորապես պտղաբերության վրա ազդում է նաեւ մարդկանց կենսագործունեության ցածր մակարդակը: Անընդհատ ավելանում է ֆիզիոլոգիական նորմերից մի քանի անգամ ցածր ապահովվածություն ունեցող մարդկանց բացարձակ թվաքանակը, բնակչության ընդհանուր թվակազմում դրանց տեսակարար կշիռը: Մի մասը գտնվում է կենսագործունեության ընդունելի սահմաններից ներքեւ, մի զգալի մասը (կեսից ավելին) չունի նվազագույն կենսամակարդակ ապահովելու հնարավորություն: Մինչդեռ հայտնի է, որ գենոֆոնդի պահպանությունն իրականացվում է մարդկանց կենսագործունեության համար նորմալ միջին մակարդակ ապահովելու, այդ մակարդակը բարելավելու միջոցով: Դա համապետական խնդիր է



եւ շոշափում է համազգային շահեր: Այս տարիների ընթացքում հայ բնակչության գենոֆոնդին արտագաղթի հետեւանքով պատճառված վնասները տասնամյակներ իրենց զգալ կտան, եթե նույնիսկ այսօրվանից ձեռնարկվեն ամենաակտիվ միջոցները:

47

2.

ԱՐՏԱԳԱՂԹԸ հանգեցնում է մայր երկրի բնակչության սեռա-տարիքային կազմի ձեւախեղմանը, ընտանիքների փոքրացմանը, ամուսնության շուկայում առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության խեղաթյուրմանը: Արտագաղթի պատճառով հայրենիքում տղաները քիչ են, աղջիկները շատ, հետաձգվել է ամուսնության միջին տարիքը:

3.

ՓԱՍՏՈՐԵՆ փոխվել է նաեւ բնակչության տարիքային բուրգը: Ի հաշիվ արտագաղթող երիտասարդության, բնակչությունը ծերանում է: Բնակչության թվակազմում ծեր բնակչության տեսակարար կշիռի բարձրանալը ուղեկցվում է աշխատանքային եւ անչափահաս տարիքի բնակչության տեսակարար կշիռն իջնելու հետ: Ուստի ծերանում է նաեւ աշխատանքային տարիքի բնակչությունը:

4.

ԱՐՏԱԳԱՂԹԸ հանգեցրել է ծնվող երեխաների թվի նվազմանը, մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների թվի, ինչպես նկատեցինք, կտրուկ անկմանը:

* Արտատպություն Վ. Ե. ԽՈԶԱԲԵԿՅԱՆԻ. «Հայաստանի բնակչության վերարտադրությունը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դար սեմին», Երեւան, 2002թ. գրքից (Էջեր 323-324):



5.

ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ արտագաղթի հետեւանքով ընդհատվել է որակյալ աշխատուժի վերարտադրության նորմալ ընթացքը, խաթարվել են աշխատանքային տարիքի սերնդափոխության շղթայի օղակները:

48

6.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ արտագաղթին մասնակցել են զանազան սոցիալ-ժողովրդագրական խմբեր: Դրանք տարբերվում են նաեւ իրենց չափերով, սեռատարիքային կազմով: Այդ սոցիալ-ժողովրդագրական խմբերի նման անհամաչափ մասնակցությունը հանգեցրել է հանրապետության բնակչության որակական կազմի փոփոխության, քանի որ զնացողների մեջ մեծ տոկոս են կազմում երիտասարդ աշխատանքային տարիքի, ինչպես նաեւ գիտատեխնիկական առաջընթացի ջահակիր բարձր որակավորման անձինք: Բնակչության գաղթի այդ ընտրանքային (սելեկտիվ) ֆունկցիան Հայաստանում բացասական դրսեւորում է ունեցել:



7.

ԱՐՏԱԳԱՂԹԸ հանգեցրել է հայրենիքում աշխատող բնակչության բեռնվածության բարձրացմանը չաշխատող եւ խնամքի տակ գտնվող անձանցով (սպառողներով): Այդ բեռնվածությունը հատկապես բարձրացել է թոշակային տարիքի բնակչության հաշվին:

8.

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ արտագաղթը անվերադարձ գաղթի հիմք է դառնում: Վե-

րադարձի խնդիրը առնչվում է ոչ միայն մայր հայրենիքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական դրական կամ բացասական տեղաշարժերի, այլեւ, ինչպես նշվեց, արտագաղթողների սերտաճման? Լեզվի, ազգային մշակույթի, արվեստի, հոգեբանական կերպարի եւ ազգային այլ արժանիքների կորստի ու նոր արժեքների ձեւավորման հետ: Գաղտնիք չէ, որ Հայաստանից արտագաղթած մեր հայրենակիցներին (եւ ոչ միայն), մասնավորապես աճող սերնդին, սպառնում է ձուլման վտանգը: Դա, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է երեխաներին, նրանց դպրոցական կրթությանը եւ ապա խառը ամուսնություններին: Մի դեպքում ձուլվում է գաղթականը իր սովորույթներով, ազգային առանձնահատկություններով, մյուս դեպքում ծնվում է արդեն ասիմիլացված քաղաքացին: Նրանք իրենց մանկությունն անց են կացնում եւ դպրոցական կրթությունն ստանում են այլ միջավայրում: Օրինակ, ԱՊՀ

երկրներում հանգրվանած երեխաները հումանիտար կրթությունը ստանում են ռուսական դպրոցներում, այլ երկրներում ապաստանածները այդ երկրի մայրենի լեզվով: Մտածողության կողը փոխվում է, լեզվամտածողության նորմալ ընթացքը խաթարվում:

Գործընթացն ինչ-որ ձգձգվում է հայերով խիտ բնակեցված բնակավայրերում, բայց միեւնույն է, իշխող միջավայրում պահպանելով մշակութային որոշ առանձնահատկությունները, ձուլումը հարթում է իր ճանապարհը, առանց հարկադրանքի կամ բռնության:

